

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարատ Բաղայան Սերգուշի-ն ՀՀՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 -1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
11	<p>Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի եսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարագարողումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի երզոնմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Երկհարկանի մահճակալի չափսերն են՝ 1400 x 600 x 1400 մմ (Ե x L x Բ), այն պատրաստվում է 18 մմ լամինացված Ե0դասի ՓՏՍ-ից: Առաջին հարկի մահճակալի բարձրությունը գետնից 300 մմ, երկու հարկերի միջև տարածությունը՝ 800 մմ: Երկու հարկերի մահճակալների գծային չափսերն էլ նույնն են և ունեն նույն խորությունը՝ 150-200 մմ: Ունի հետևյալ չափսերի՝ 400 x (35 x 35) x 185 x 1170 մմ (L x Խ x Բ) փայտե աստիճան, (35 x 35) մմ չափսերի փայտյա աստիճանահարթակներով, որոնց միջև քայլերի հեռավորությունը՝ 250-300 մմ: Ամրագոտիները նույնպես պատրաստվում է 18մմ լամինացված Ե0դասի ՓՏՍ-ից, ունեն 300 մմ լայնություն և</p>

ալիքաձև տեսք: Ալիքի խորությունը 50-100 մմ է , երկարությունը՝ 200- 300 մմ: Ներքնակների տակ գցվում է ամբողջական 18մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓՏՍ, որոնց վրա օդափոխության համար պետք է բացվեն 30 մմ տրամագծով առնվազն երեք անցք: Ներքնակը հենվում է կողերով, լայնությամբ անցնող 18մմ հաստությամբ 200 մմ լայնության լամինացված E0դասի ՓՏՍ-ից պատրաստված հինգ ամրագոտիների և սևարներին ամրացված դետալների վրա: Ներքնակի նկարագիրը գտիր «Փափուկ գույք և պարագաներ» բաժնի թիվ 6 կետում:

Լամինացված E0դասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության բոլոր անկյունները պետք է կլորացվեն, եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են պտուտակներով, փայտե չիվիներով, Էմուլսիայով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված և երաշխավորված ամրակցումներով: Ոտքերին պետք է ամրացվեն պոլիմերային խցաններով՝ 8 մմ հաստությամբ: Գույները նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները պետք է մինչև մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և Էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր Էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Արարիտ Բաղադրան Սերգուշի в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՍ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4
-1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
11	